ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 49-Ա « 09 » հունվարի 2024 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-23/122-3 ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 95 մանկապարտեզի բակի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ Կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի 1.2 կետով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները:

Տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունն աշխատանքների կատարման համար սահմանելով մինչև սույն թվականի դեկտեմբերի 18-ը ժամկետ՝ 14.12.2023 թվականին «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին է հասցեագրել թիվ 16/229154-23 գրությունը՝ Պատվիրատուին նախագծանախահաշվային աշխատանքների ողջ փաթեթը հանձնելու վերաբերյալ, միաժամանակ նշված գրությամբ վերջինս իրազեկվել է Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի դրույթի մասին:

18.12.2023 թվականի թիվ Ե-18/12-1 գրությամբ «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ աշխատանքային նախագիծը և նախահաշիվը էլեկտրոնային տարբերակով 18.12.2023 թվականին ուղարկվել է Պատվիրատուի /shin-barekargum@mail.ru/ էլ. հասցեին: Արդյունքում Կատարողի կողմից թույլ է տրվել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջների խախտում, այն է՝ յուրաքանչյուր մասի համար նախագիծը պետք է ներկայացնել 6-ական օրինակից, նախահաշիվը՝ 3-ական, նաև էլ. տարբերակով:

Տվյալ դեպքում Կատարողի կողմից խախտվել են վերոնշյալ դրույթները, բացի այդ պաշտոնական է համարվում shin-barekargum@yerevan.am էլ. հասցեն, իսկ ներկայացված նախագծի ստուգման արդյունքում պարզվել է, որ նախագծում արտացոլված գծագրերը չեն համապատասխանում տեղանքին:

20.12.2023 թվականին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը սահմանելով եռօրյա ժամկետ՝ «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին է հասցեագրել թիվ 16/234490-23 գրությունը՝ նախագիծը տեղանքին համապատասխանեցնելու և ողջ կազմով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությանը ներկայացնելու համար, սակայն ներկայացված գրությանը որևէ պատասխան չի տրվել:

Երևանի քաղաքապետարանը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է կնքված Պայմանագիրը:

Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում՝ սույն թվականի հունվարի 3-ին և պայմանագիրը հունվարի 4-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 2-րդ մասով.

1. «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ